



ԱՐՄՎԻՍԲԱՆԿ

ՓՐԱՅՎԻԹ & ԻՆՎԵՍՏՄԵՆԹ ԲԵՆՔԻՆԳ

ՀԱՎԵԼՎԱԾ

Հաստատված է նոր խմբագրությամբ
«ԱՐՄՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ Տնօրինության

___.__.2019թ. թիվ ___-Լ որոշմամբ

Ուժի մեջ է ___.__.2019թ.

ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՈՒՂԵՆԻՇԱՅԻՆ/ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ և ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ և
ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՎՈՂ ՎԱՐԿԵՐ

Պայման	Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման ծրագիր	ՀՀ գյուղատնտեսության ոլորտում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր	ՀՀ-ում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների եվ հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցության ծրագիր	Գյուղատնտեսական հումքի մթերումների նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր	ՀՀ-ում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագիր
Նպատակը	Ոռոգման արդիական համակարգերի ներդրում	Հակակարկտային ցանցերի ներդրում	Պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնում	Գյուղատնտեսական հումքի մթերումների իրականացում	Ագրոպարենային ոլորտի սարքավորումների ձեռքբերում ⁱ
Առավելագույն գումար / ՀՀ դրամ	150,000,000 ՀՀ դրամ ⁱⁱ	85,000,000 ՀՀ դրամ	Պտղատու այգիների համար՝ մինչև 248,000,000 ՀՀ դրամ, Հատապտղանոցների համար՝ 69.600,000 ՀՀ դրամ	1,500,000,000 ՀՀ դրամ	450,000,000 ՀՀ դրամ
Առավելագույն ժամկետ/տարի	3	7	8	1 տարի	8 տարի
Վարկառուի կողմից փաստացի վճարվող տարեկան տոկոսադրույք ⁱⁱⁱ	0%-2% ^{iv}	0%-2% ^v	0%-2% ^{vi}	0%-3% ^{vii}	0%-4% ^{viii}
% հաշվարկման կարգը	% -ը հաշվարկվում է վարկի գումարի նվազող մնացորդի նկատմամբ՝ հիմք ընդունելով տարին 365 օր				
Տրամադրման եղանակը	անկախիկ/ կանխիկ	անկախիկ/ կանխիկ	անկախիկ/ կանխիկ	անկանխիկ	
Մարման կարգը	Վարկի մայր գումարի համար կարող է սահմանվել արտոնյալ ժամկետ, առավելագույնը տարեկան 6 ամիս	Վարկի մայր գումարի մասով կարող է տրամադրվել մինչև 1 տարի արտոնյալ ժամանակահատված	Վարկի մայր գումարի մասով կարող տրամադրվել մինչև 5 տարի արտոնյալ ժամանակահատված	Արտոնյալ ժամկետը՝ նվազագույնը՝ 2 ամիս, առավելագույնը՝ 3 ամիս	Լիզինգի գումարի մարումը իրականացվում է մայր գումարի հավասարաչափ վճարման եղանակով: Հնարավոր է արտոնյալ ժամանակաշրջանի տրամադրում տարեկան մինչև 6 ամիս ժամկետով ^{ix}
Ապահովությունը	անշարժ գույք, հիմնական միջոցներ, երրորդ անձանց երաշխավորություններ, ապրանքանյութական պաշարներ				Կարող է պահանջվել լրացուցիչ ապահովում, այդ թվում՝ երաշխավորություններ

Վարկի գումարի մարման կետանցի դեպքում օրական տույժ՝ % մարման ենթակա գումարից	0.1%
Տոկոսագումարի մարման կետանցի դեպքում օրական տույժ՝ % մարման ենթակա գումարից	0.1%
Ժամկետանց վարկի գումարի նկատմամբ հաշվարկվող տոկոսադրույք	Համաձայն ՀՀ Քաղ. Օրենսգրքի 411 հոդվածի պահանջների
Գրավի գնահատում	Ըստ պահանջի՝ բանկի հետ համագործակցող անկախ գնահատող ընկերության կողմից
Վաղաժամկետ մարման դեպքում տույժ մարվող գումարից	Չի սահմանվում
Մոնիթորինգի գործողություններին խոչընդոտելու դեպքում՝ տուգանք	100,000 ՀՀ դրամ
Տրամադրված վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման դադարեցման դեպքերը	<p>Հակակարկտային ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման և ՀՀ-ում ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների հիմնման համար վարկային տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրեր</p> <ul style="list-style-type: none"> • Եթե առկա են տվյալ վարկի մասով վարկառուի մեկ տարվա (նախորդ 12 ամիսներ) կտրվածքով հանրագումարային վաթսուն օրվանից ավել ժամկետանց պարտավորություններ վարկատուի հանդեպ կամ վարկատուի հանդեպ ունեցած ժամկետանց պարտավորությունների հետևանքով, վարկերի դասակարգման գործող կարգի համաձայն, վարկը ստանդարտ դասով դասակարգված չէ, • Եթե չի պահպանվում Ծրագրով սահմանված պահանջները, կամ չի պահպանվել վարկի տրամադրման պայմանները, կամ նախարարությունը մոնիթորինգի արդյունքում հայտնաբերում է սույն Ծրագրի պայմանների խախտում, • վարկառուի կողմից վարկի ոչ նպատակային օգտագործման և կեղծ տեղեկատվություն տրամադրելու դեպքերում մինչ այդ պահը տրամադրված սուբսիդավորման գումարը ենթակա է վերադարձման: Վերը նշված մնացած դեպքերում, ինչպես նաև Վարկառուի և Բանկի միջև կնքված պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում, վարկի սուբսիդավորումը դադարեցվում է տվյալ վարկի մարման ժամանակացույցով սահմանված վարկի նախորդ մարման օրվանից սկսած: <p>Գյուղատնտեսական հումքի մթերումների նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր՝</p> <ul style="list-style-type: none"> • Եթե առկա են տվյալ վարկի մասով մեկ տարվա կտրվածքով (նախորդ 12 ամիսներ) հանրագումարային վաթսուն օրվանից ավել ժամկետանց պարտավորություններ, կամ օբյեկտիվ չափանիշների համաձայն վարկը ստանդարտ դասով դասակարգված չէ,

	<ul style="list-style-type: none"> ▪ թողարկված և իրացված ծավալների մասին հաշվետվությունը Վարկառուի կողմից յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում Բանկ չներկայացնելը, ▪ վարկն օգտագործվել է ոչ նպատակային և/կամ սուբսիդավորման պայմաններին ոչ համապատասխան, ▪ Որպես վարկային միջոցների ստացման հիմք է ներկայացվել վարկառուին սեփականության կամ օգտագործման իրավունքով պատկանող կամ վարկառուի հիմնադիր կամ բաժնետեր հանդիսացող անձանց և նրանց ընտանիքի անդամների (ծնող, ամուսին, զավակ) կողմից մշակվող հողատարածքների բերքի կամ դրա մի մասի գծով վարկառուի հետ կնքված բերքի գնման պայմանագիր: <p>Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման ծրագիր</p> <ul style="list-style-type: none"> ▪ Վարկառուի կողմից վարկը ոչ նպատակային օգտագործվելը, ▪ եթե առկա են տվյալ վարկի մասով մեկ տարվա կտրվածով հանրագումարային վաթսուն օրվանից ավել ժամկետանց պարտավորություններ, կամ օբյեկտիվ չափանիշներով վարկը ստանդարտ դասով դասակարգված չէ, ▪ վարկառուի կողմից ներկայացված տեղեկություններում կեղծիքի հայտնաբերելը: <p>ՀՀ-ում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության` լիզինգի պետական աջակցության ծրագիր</p> <ul style="list-style-type: none"> ▪ եթե առկա են տվյալ լիզինգի մասով մեկ տարվա կտրվածով (նախորդ 12 ամիսներ) հանրագումարային վաթսուն օրվանից ավել ժամկետանց պարտավորություններ, կամ օբյեկտիվ չափանիշների համաձայն լիզինգը ստանդարտ դասով դասակարգված չէ, ▪ Երբ Մոնիթորինգի արդյունքում արձանագրվում է ծրագրի պայմանների խախտում
Ստացված սուբսիդավորված գումարների վերադարձը	Ետ Վարկի ոչ նպատակային օգտագործման և/կամ սուբսիդավորման պայմաններին ոչ համապատասխան օգտագործման դեպքում մինչև այդ պահը ԳՖԿ-ի կողմից սուբսիդավորված տոկոսագումարները Վարկառուի կողմից ենթակա են վերադարձման` խախտումը հայտնաբերելու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում:
Գործող պայմանագրի (վարկային, գրավի, այլ) պայմանների փոփոխություն	50.000 ՀՀ դրամ
Վարկի տրամադրման որոշումը կայացնելու ժամկետը	հաճախորդի կողմից պահանջվող բոլոր փաստաթղթերը բանկին տրամադրելուց 20 աշխատանքային օրվա ընթացքում
Վարկի տրամադրման որոշման մասին հաճախորդին տեղեկացում	2 աշխատանքային օր
Վարկը փաստացի տրամադրելու ժամկետը	հաճախորդի կողմից վարկի ձևակերպման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց 3 աշխատանքային օրվա ընթացքում
Հաստատված/դեռ չտրամադրված վարկի պայմանների վերանայում	50,000 դրամ, սակայն ոչ ավել, քան նախկին որոշման համար գանձված/գանձվելիք միջնորդավճարի գումարը

Այլ պայմաններ

ՀՀ գյուղատնտեսության ոլորտում կարկտասպաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր՝

- Մույն ծրագրի շրջանակում վարկերը կտրամադրվեն 0.5-10 հա խաղողի և ինտենսիվ պտղատու այգիներում կարկտասպաշտպան ցանցի ներդրման նպատակով,
- Յուրաքանչյուր Շահառուի համար սահմանված 1 հեկտար այգու համար կարկտասպաշտպան ցանցի հիմնման ծախսերը չպետք է գերազանցեն.
 - **Կապալառու կազմակերպության միջոցով ներդնելու պարագայում՝**
 - Խաղողի այգի՝ 3.6 մլն ՀՀ դրամ, վարկի առավելագույն գումար՝ 36 մլն ՀՀ դրամ,
 - Ինտենսիվ պտղատու այգի՝ 8.5 մլն ՀՀ դրամ, վարկի առավելագույն գումար՝ 85 մլն ՀՀ դրամ:
 - **Առանց Կապալառու կազմակերպության միջոցով ներդնելու պարագայում՝**
 - Խաղողի այգի՝ 2.88 մլն ՀՀ դրամ, վարկի առավելագույն գումար՝ 28.8 մլն ՀՀ դրամ,
 - Ինտենսիվ պտղատու այգի՝ 6.8 մլն ՀՀ դրամ, վարկի առավելագույն գումար՝ 68 մլն ՀՀ դրամ:

ՀՀ-ում ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների հիմնման համար վարկային տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր

- Ծրագրի շրջանակներում տնտեսվարողներին կարող են տրամադրվել վարկեր 0.5-10 հա ինտենսիվ պտղատու /այդ թվում խաղողի այգի/ և 0.5-3 հա հատապտղատու այգիների հիման նպատակով:
- Յուրաքանչյուր շահառուի համար սահմանված 1 հեկտար այգեհիմնման աշխատանքների և 1 տարվա խնամքի ծախսերի առավելագույն սահմանաչափերը և վարկի առավելագույն գումարը կարկտասպաշտպան ցանցով (շահառուի հայեցողությամբ) և առանց դրա չպետք է գերազանցեն.
 - **Եթե այգեհիմնումն իրականացնում է կապալառու կազմակերպությունը.**
 - Խաղողի այգի՝ 10.8 մլն դրամ, վարկի առավելագույն գումար՝ 108մլն ՀՀ դրամ, կարկտասպաշտպան ցանցով՝ 14.4 մլն դրամ, վարկի առավելագույն գումար՝ 144 մլն ՀՀ դրամ,
 - Ինտենսիվ պտղատու այգի՝ 18.7 մլն դրամ, վարկի առավելագույն գումար՝ 187 մլն ՀՀ դրամ, կարկտասպաշտպան ցանցով՝ 24.8 մլն դրամ, վարկի առավելագույն գումար՝ 248 մլն ՀՀ դրամ,
 - Հատապտղանոց՝ 23.2 մլն դրամ, վարկի առավելագույն գումար՝ 69.6մլն ՀՀ դրամ, կարկտասպաշտպան ցանց նախատեսված չէ,
 - **Եթե այգեհիմնումն իրականացնում է տնտեսվարողը /առանց կապալառու կազմակերպության ներգրավվման/.**
 - Խաղողի այգի՝ 8.6 մլն դրամ, վարկի առավելագույն գումար՝ 86 մլն ՀՀ դրամ, կարկտասպաշտպան ցանցով՝ 11.5 մլն դրամ, վարկի առավելագույն գումար՝ 115.2 մլն ՀՀ դրամ,
 - Ինտենսիվ պտղատու այգի՝ 14.9 մլն դրամ, վարկի առավելագույն գումար՝ 149 մլն ՀՀ դրամ, կարկտասպաշտպան ցանցով՝ 19.8 մլն դրամ, վարկի առավելագույն գումար՝ 198 մլն ՀՀ դրամ
 - Հատապտղանոց՝ 18.6 մլն դրամ, վարկի առավելագույն գումար՝ 55.8 մլն ՀՀ դրամ, կարկտասպաշտպան ցանց նախատեսված չէ:

Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման ծրագիր

- Կաթիլային ոռոգման համակարգի 1 հա-ի համար կատարվող վարկային ներդրումը անկախ մշակաբույսից չպետք է գերազանցի 2.2 մլն. ՀՀ դրամը, իսկ անձրևացման համակարգերի համար՝ 2.7մլն ՀՀ դրամը,
- Ծրագիրը առանց կապալառուի իրականացնելու դեպքում՝ Կաթիլային ոռոգման համակարգի 1 հա-ի համար կատարվող վարկային ներդրումը անկախ մշակաբույսից չպետք է գերազանցի 1.6 մլն. ՀՀ դրամը, իսկ անձրևացման համակարգերի համար՝ 1.9 մլն ՀՀ դրամը:

ՀՀ-ում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագիր՝

- Լիզինգառուն վճարում է լիզինգի առարկայի արժեքի 20%-ի չափով կանխավճար:

ⁱԼիզինգը տրամադրվում է հետևյալ ոլորտներում օգտագործվող ագրոպարենային սարքավորումների ձեռք բերման նպատակով՝ անասնաբուծություն, այդ թվում՝ տավարաբուծություն, ոչխարաբուծություն, խոզաբուծություն, թռչնաբուծություն, ձկնաբուծություն, մեղվաբուծություն և արդյունագործական զագանաբուծություն, բուսաբուծություն, այդ թվում՝ ջերմոցային տնտեսություն, սառնարանային տնտեսություն, այդ թվում՝ կաթի մթերման կայաններ, թարմ պտուղբանջարեղենի և հատիկաբնդեղենի տեսակավորման, փաթեթավորման ու հատիկաբնդեղենի գտման գործունեություն, սպանդանոցային տնտեսություն, ագրովերամշակող արդյունաբերություն, ագրոպարենային ոլորտի այլ գործունեություն:

ⁱⁱԱշխատանքները առանց կապալառու կազմակերպության իրականանցելու պարագայում վարկի առավելագույն գումարը կազմում է 110,000,000 ՀՀ դրամ:

ⁱⁱⁱԲանկի կողմից վարկերը տրամադրվում են մինչև 12% /լիզինգի ծրագրի դեպքում՝ 11%/ տարեկան տոկոսադրույքով, որից սուբսիդավորման ենթակա գումարը կազմում է մինչև 12% տարեկան տոկոսադրույքի և վարկառուի կողմից փաստացի վճարվող տոկոսադրույքի տարբերությունը: ՀՀ-ում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի շրջանակներում ՀՀ սահմանամերձ բնակավայրերի տարածքներում գործունեություն իրականացնող տնտեսավարողների համար լիզինգի տոկոսադրույքի սուբսիդավորումը կիրականացվի 11 տոկոսային կետով, որպեսզի լիզինգառուի կողմից վճարվող լիզինգի տարեկան տոկոսադրույքը կազմի 0 տոկոս:

^{iv}ՀՀ սահմանամերձ համայնքներում կամ գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներում ներդրման դեպքում, կամ առնվազն 3 հա հողատարածքում ներդրող գյուղատնտեսական գործունեություն ծավալող կոոպերատիվներին տրամադրված վարկերը կսուբսիդավորվեն այնպիսի չափաքանակով, որ վարկառուի կողմից փաստացի վճարվող տարեկան տոկոսադրույքը կազմի 0%:

^vՍուբսիդավորումն իրականացվելու է այնպիսի չափաքանակով, որ վարկերը Շահառուներին տրամադրվեն 2% տոկոսադրույքով, իսկ առնվազն 3 հա կարկտապաշտպան ցանցեր ներդրող Կոոպերատիվներին և ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված սահմանամերձ համայնքներում գործունեություն իրականացնող շահառուներին վարկը կսուբսիդավորվի այնպիսի չափաքանակով, որ վարկառուի կողմից փաստացի վճարվող տարեկան տոկոսադրույքը կազմի 0%:

^{vi}Սուբսիդավորումն իրականացվելու է այնպիսի չափաքանակով, որ վարկերը Շահառուներին տրամադրվեն 2% տոկոսադրույքով, իսկ Սահմանամերձ համայնքների տնտեսավարողներին և Կոոպերատիվներին՝ 0%:

Սահմանամերձ համայնքների տնտեսավարողներ են համարվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված սահմանամերձ համայնքների տնտեսավարողները, իսկ Կոոպերատիվներն առնվազն 3 հա այգի հիմնող գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող կոոպերատիվներն են:

^{vii}Սուբսիդավորումն իրականացվելու է այնպիսի չափաքանակով, որ վարկերը Շահառուներին տրամադրվեն 3% տոկոսադրույքով, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի տարածքներում գործունեություն իրականացնող տնտեսավարողների համար վարկի տոկոսադրույքի սուբսիդավորումը կիրականացվի մինչև 12 տոկոսային կետին համարժեք մասը (գումարը), որպեսզի վարկառուի կողմից վճարվող վարկի տարեկան տոկոսադրույքը կազմի 0 տոկոս:

^{viii}ՀՀ սահմանամերձ համայնքներում գործունեություն իրականացնող տնտեսավարողների համար լիզինգի տոկոսադրույքի սուբսիդավորումը կիրականացվի 11%-ային կետով, որպեսզի լիզինգառուի կողմից վճարվող լիզինգի տարեկան տոկոսադրույքը կազմի 0%:

^{ix}Կարող է սահմանվել լիզինգի մայր գումարի համար արտոնյալ ժամկետ՝ լիզինգը տրամադրելու պահից առավելագույնը 3 ամիս ժամկետով: Բացի այդ, կարող է սահմանվել Լիզինգի հիմնական գումարի վճարման համար դադարի շրջաններ՝ տարեկան մինչև 6 ամիս ժամկետով: